## **ՉԱՆԳԻՍՏ ԵՐԱՆԱՇՆՈՐ**Յ Տ. ՂԵԼՈՆԴ ԱՐՔ. ՉԷՊԷԵԱՆԻ

Կաթողիկոսութեան դիւանեն տրուած մահազդ մը հաղորդեց, որ երանաշնորհ Սրբազանը վախճանած է Յինգշաբթի, 9 Մարտի առաւօտուն, յետ կարճատեւ հիւանդութեան։ 95ամեայ Սրբազան Յայրը նաեւ Յայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ երիցագոյն միաբանն էր։

Վերջին օծումը եւ թաղման կարգը տեղի ունեցան Ուրբաթ, 10 Մարտին, Կաթողիկոսութեան Մայրավանքին մեջ, Անթիլիաս, նախագահութեամբ Ն.Ս.O.S.S. Արամ Ա. Կաթողիկոսի։

Թեմիս Յոգեւորականց Դասու եւ Ժողովականութեան անունով, Առաջնորդ Սրբազանը՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Յինգշաբթի օր ցաւակցական նամակ մը յղեց Վեհափառ Յայրապետին ու միաբանութեան անդամներուն, վեր առնելով առյաւէտ բաժնուող աւագ հոգեւորականին վաստակն ու նուիրումը մեր եկեղեցւոյ ու Ժողովուրդին։ Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, այսօր, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան պաշտօն։

Ղեւոնդ Սրբազանը մեր եկեղեցւոյ ու Մեծի Տանն Կիլիկոյ կաթողիկոսութեան երախտաշատ նուիրեալներեն էր։ Ան իբրեւ սան՝ Կաթողիկոսութեան յարկը դիմած է միաբանութեան Անթիլիաս հաստատման առաջին օրերուն, 1930ին։

Կուսակոօն քահանալ ձեռնադրուած է 1937ին եւ լծուած՝ անդուլ աշխատանքի։ Վարած է դպրեվանքի տեսչութիւնը, եղած է Առաջնորդ Ըերիու եւ Իրակահկոկաստակի Թեմերուկ։ Ան բակայի Կիարոսի, Կաթողիկոսութեան դերակատարութիւն ունեցած F Անթիլիասի գոլատեւման ու առաբելութեան ծաղկումին մէջ, սերնդակից ոլյալով երջանկալիշատակ Չարեհ Ա. եւ Խորեն Ա. Կաթողիկոսներուն։ Իր գործունէութեամբ նուհոեաւ աշխատանքով nL աև Կաթողիկոսութեան ամուր սիւներէն մէկը եւ ապրող դպրոց մր՝ նորահաս սերունդներուն համար։

## PASSING OF ARCHBISHOP GHEVONT CHEBEYAN

It is with great sadness that we inform you of the passing of Archbishop Ghevont Chebeyan on Thursday, March 9, following a brief illness. Extreme Unction and Funeral Services took place on Friday, March 10, in Antelias under the presidency of His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia. On Thursday, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, sent a letter to His Holiness expressing his condolences on behalf of the entire Western Prelacy clergy order and delegates. On Sunday, requiem services took place in all Prelacy churches for Archbishop Chebeyan.

Archbishop Chebeyan was one of the most devoted servants of our church and of the Catholicosate of Cilicia. He was one of the first students to enter the Antelias Seminary when it opened in 1930. In 1937, he was ordained

a celibate priest. He has been director of the Seminary and the Prelate of the Cyprus, Syria, and Iran Prelacies. He had a key involvement in the endeavors and mission of the Catholicosate during the times of H.H. Zareh I and H.H. Khoren I, both of blessed memory. With his devoted service he became a pillar of the Catholicosate, an unforgettable teacher and mentor to the successive generations of seminarians.